ԳՈՒԳԱՐՔԻ ԵՆԹԱՇՐՋԱՆ

Անցյալում եղել է Գուգարքի Տաշիր գավառի, ավելի ուշ՝ Բորչալուի, Լոռի-Փամբակի կազմում: Վերջին դարում հորջորջվել է Ղարաքիլիսա (Սև ժամ), 1935-ից՝ Կիրովականի, իսկ 1964-ից՝ Գուգարքի շրջան: Հարուստ է հին հուշարձաններով: Գիտական աշխարհում առանձնապես կարևորվում են Վանաձոր քաղաքի բրոնզեդարյան կենտրոնը, Քոսի ճոթեր, Թագավորանիստ էնեոլիթյան բնակատեղիները, Եղեգնուտի, Փառնակի, Լեռնապատի, Խնձորուտի բնակատեղիներն ու ամրոցները, Անտառուտի, Մարգահովտի, Փամբակի դամբարանադաշտերը:

Շրջանի միջնադարյան հուշարձանների խմբում շատ են գյուղատեղիները, ավերյալ բերդերն ու եկեղեցիները, պատմական գերեզմանոցները, խաչքարերը (Անտառուտ, Վահագնի), բայց սակավ են վիմագիր արձանագրությունները, որոնցից հայտնիները ներկայացվում են ստորև:

ՎԱՆԱՁՈՐ

Ոչ վաղ անցյալում կոչվում էր Կիրովական, ավելի վաղ, հավանաբար, ԺԵ դարից հետո՝ Ղարաքիլիսա, սևագույն քարով եկեղեցու պատճառով: Թեմական Սարգիս արքեպիսկոպոս Ջալալյանցի բնորոշմամբ Ղարաքիլիսան «է լայնանիստ գիւղ..., դիրք տեղւոյն վայելուչ, բարեհամ և առողջարար..., օդն զովարար, և հողն արգաւանդ»:[94] Վանաձոր անունը կապված է ձորահովտում երբեմնի գոյություն ունեցող մենաստանի հետ, որը ԺԹ դարի սկզբում արդեն ավերված էր:

Մշակութային հարուստ ժառանգության հնագույն շերտերը վկայում են, որ այս բնակավայրը խոշոր ու կարևոր կենտրոն է եղել առնվազն մ.թ.ա. II հազարամյակից: Ժդ. եղել է Կյուրիկյան թագավորության կազմի մեջ: Պահպանվող միջնադարյան հուշարձանները սակավ են, սակավ են նաև վիմագիր հիշատակագրությունները:

Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. Ըստ Ջալալյանցի, դեռևս հնում, գյուղի հյուսիսային եզրում, բլրի վրա «գոյր հոյակապ վանք յանուն սուրբ Աստուածածնի շքեղ կաթողիկէիւ» և այլ հարակից շինություններ, որոնք «1828 ամի տեառն ի սաստիկ յերկրաշարժութենէ ի միասին անկել հիմնովին կործանեցան. իսկ ի 1830 ամի աշխատասիրութեամբ պարոն Փիլումայ Թայիրեանց և արդեամբք հայ ազգի բնակչաց վերստին շինեցաւ կոփածոյ քարամբք նոր եկեղեցի ի վերայ չորից միաստանի քարեայ սեանց»:[95] Տասներկու նիստյա թմբուկով այս նոր եկեղեցու շինարարության համար Ջալալյանցին ևս վիճակված էր գումարներ հանգանակել Աղվանքի, Արցախի և Գանձակի հայերից: Այս իրողությունն են մատնանշում նաև եկեղեցու որմերի արձանագրությունները՝ անուն առ անուն հիշատակելով նվիրատուներին: Շինարարական ու բարեկարգման այս աշխատանքներին մասնակցություն են ցուցաբերել նաև կեսարացի, կարնեցի, թիֆլիսեցի, խոյեցի և այլ տեղերի հայերը: Աղոթարանի արևմտյան մուտքի ներսի մի հիշատակագրություն էլ մանրամասնում է, որ այն կառուցվել է ռուսական ցար Նիկոլայ Պավլովիչ կայսեր (Նիկոլայ I Ռոմանով 1796-1855 թթ.) և Ամենայն Հայոց Կաթողիկոս

---

[94] *Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց,* Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփխիս, 1958, էջ 104-105:
[95] Նույն տեղում:

Հովհաննես Կարբեցու ժամանակ՝ 1831 թվին: Երևանից ներգաղթած Աբովյանների ներդրումով 1912 թ. կառուցվել և սալարկվել է եկեղեցու «վերնատունը»:

Դատելով եկեղեցին շրջապատող գերեզմանոցի տապանաքարերի ու խաչքարերի առանձնահատկություններից ու վիմագրական նյութերից, պարզվում է, որ այստեղ եկեղեցի է եղել առնվազն Կյուրիկյան թագավորության ժամանակներից (Ժ դար), որի մնացորդները գուցե թե ի հայտ կգան խնամքով հետազոտման դեպքում:

971. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. արևմտյան փականաքարի վրա շարված սալին, արտաքուստ, 7 տող.



ՇԻՆԵՑԱՒ ԿԹՌՂԻԿԷ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՍ ՅԱ-
ՆՈՒՆ ՍԲ ԱՍՏՈՒԱԾԱՆԱՅ ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴ
ԻՆ ՄԵՐՈՅ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ: ԵՒ
ՅԱՌԱՋ Ի ՇԱՐԺՄԱՆԷ ՓԼՈՒՑԱՒ, ՈՐ ՔԱՐ Ի ՔԱՐԻ
ՎԵՐԱՅ ՈՐ ՈՉ ՄՆԱՑ, ԱԺՄ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՅ, ԵՍ՝
ՓԻԼՈՒՄԱՅ ԻՋԲԱՇԻՍ, ՕԳՆԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈ-
ՎՐԴՈՑ, ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑԱՔ:

Ծանոթ. Ջալալյանցի և սույն արձանագրության տեղեկությունները նույնական են: Հստակ է ուրեմն, որ 1828 թ. (կամ 1827 թ.) երկրաշարժից հետո հիմնահատակ կործանվել է եկեղեցին (ոչ միայն եկեղեցին). *ի շարժմանէ փլացաւ, որ քար ի քարի վերայ որ ոչ մնաց* և այժմ, հիմա (*ածմ*) համայն ժողովրդի օգնությամբ Փիլումայ հարյուրապետը (= *իւզբաշին*) վերստին վերականգնում է (*նորոգեցաք*):

972. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. նախորդի տակ, բարավորին, նույն գրչությամբ, 8 տող.



ՅԻՇԱՏԱԿ է ՏՎԱԾ ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԱ :ԺԵ: (15) ԹՈՒՄԱՆ
ՇԱՄՔՕՈԵՑԻ ԻՇԽԱՆԱՑ ՍԱՐԳԻՍ ԱՂԷՆ, ՄԿՐՏԻՉ
ԱՂԷՆ, ԱՂԱՄԱԼ ԱՂԷՆ: ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ է ՏՎԱԾ ՍԲ Ա[ՍՏՈՒԱԾ]-
ԱԾՆԱ : Ե: (5) ԹՈՒՄԱՆ ԳԵՂԱՄԷԱՆ ՏՐ ԱՐՈՒ[ԹԻՒՆ]Ի ՈՐԴԻ ԱՒԷՏԻՔ:
ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ է ԱՋԱ[ԹՈ]Ռ Բ (2) ԱՇՏԱՆԱԿ ՕՀԱՆԷՍ ՍԻՄ[ՈՆ]ՕՎ:
ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ ԵՂՆԱՆՑ ՍՕԼՕՄՈՆ : Գ: (3) ԹՈՒՄԱՆ: ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ
ՏՐ ՂԱՋԱՐԵԱՆ ԱՒԷՏԻՔ : Բ: (2) ԹՈՒՄԱՆ: ԷԼԻ ՇԱՄՔ[Օ]Ռ[է]ՑԻ
ԲԱՐԷՊԱՇՏ ԱՆՑԻՆՔՆ ՏՎԻՆ ԺԵ (15) ԹՈՒՄԱՆ ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]-
ԾԱԾՆԱ:

Ծանոթ. Հիրավի աղետի դեպքում սա ազգային ուժերի համախմբման ցայտուն օրինակ է, գոյատևության ներմղումի աղբյուր: Այս 40 թուման գումարը հանգանակել է թեմական Սարգիս Ջալալյանցը, և արժանիորեն չեն մոռացվել նվիրատուները:

Դրամական հատուցումներից բացի Հովհաննես Սիմոնովը իբրև հիշատակ ընծայել է աջաթոռ Բ աշտանակ: Պետք է կարծել, որ դրանք եղել են բազմաստեղն մետաղական մոմակալներ, որոնք դրվում են աջ դասում, առաջնորդի աթոռի մոտ, հանդիսավոր արարողությունների ժամանակ իբրև զարդ և լուսավորության միջոց:

973. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հյուսիսարևելյան սյան արևմտյան նիստին, 3 տող.

ԴԱՄՐԽԱՆԱՆՑ ԱԿՕԲԻ
ՈՐԴԻ ԱՍԱՏՈՒՐ ԱՅՍ
ՍԻՆ ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԱ:

974. Ս.ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավարևելյան սյան արևելյան նիստին, 4 տող.

ԽՕԻՑԻ ՂԱՐԻՊՆ, ԻՐ
ԵՂՊԱՅՐ ԳԱԼՈՒՍՏ
ԱՅՍ ՍԻՆ ՏՎԻՆ
ՅԻՇ[Ա]Տ[Ա]Կ ՍԲ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾՆԱ:

Ծանոթ. Առանձին անձանց հոգածությամբ աղոթատների 4 ավետարանիչների խորհրդանշան-սյուների կառուցման միջնադարյան ավանդույթը (Սանահին, Մուղնի, Քանաքեռ) տևականորեն շարունակվում է: Այս դեպքում Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթակիր սյուներից երկուսը կառուցվել են Դամրխանանց (Դարբինյան) Ասատուրի և խոյեցի Ղարիբի ու իր եղբայր Գալուստի ներդրումով:

975. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. հարավային մուտքի բարավորի գլխին, նետաձև նկամարի տակ, 6 տող.

ՅՇՏԿԷ ԹԻՒ
ԼԻՋՑԻ·ԱՋՆ ԻՒ ԻՎԱՆ
ԳԱԲՐԻԷԼԻՀ ·ՇԱՐՕՎԻՆ
ՂԱՐՍՑԻ ՄՀԻՅԱԿՈԲԵԿԱՐԱՊՏ
ՏԻԳՐԱՆՈՎ + ՍԱՐԻԲԵԱԿ ՄԵԼՔՎ
ՏՐՅ ԱՌԹԻԵՆՑ·ՅՕՀՆՆՄԾՂՐԲԼԱՑԻ

Յ|Ի|Շ|Ա|Տ|Ա|Կ է ԹԻ-
ԻԼՋՅԻ ԱՋՆԻՒ ԻՎԱՆ
ԳԱԲՐԷԼԻՉ ՇԱՐՕՎԻՆ,
ԴԱՐՍՑԻ Մ|Ա|Հ|ՏԵՍ|Ի ՅԱԿՈԲ ԵՒ ԿԱՐ|Ա|Պ|Ե|Տ
ՏԻԳՐԱՆՈՎ, ՍԱՐԻԲԵԱԿ ՄԷԼ|Ի|Ք|Օ|Վ . . . . .
ՏՐ ՅԱՐՈՒԹԻ|ՒՆ|Ե|Ա|ՆՑ ՅՕՀ|Ա|ՆՆ|ԷՍ| Մ|Ե|Ծ Ղ|Ա|Ր|Ա|ՔԻԼ|ԻՍ|ԱՑԻ:

976. Ս.ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. Նախորդից վեր կամարից աջ, 4 տող.



ԿԱՐՆԵՑԻ
ՕՀԱՆԱՋԱՆ Մ|ԻՆԱՍ|Ի ՄԱՆՈՒԿ|Օ|Վ,
ՍԻՐԱԿԱՆ Ճ|ԱԼԱԼ|Ի ՍԻԼԲԱՐՕՎ,
ԴԱՐՍՑԻ ՄՕՍԻՍ, ԳՐԻԳՈՐ:

Ծանոթ. Լրացված անունները անվերապահ չեն: Նույն կամարից ձախ ևս կա քառատող արձանագրություն դարսեցիների վերաբերյալ: Դրանք XX դարի սկզբում կատարված նորոգումների ու կցակառույցների մասին են:

Երրորդ տողի վերջում կարող ենք կարդալ նաև ՍԻԼՔԱՕՎ, իսկ ԳՐԻԳՈՐ-ը՝ ԳՐԻԳՈՎ (ԳՐԻԳՈ|ՐՈ|Վ) (Խմբ):

977. ԽԱՉՔԱՐ. Ս. Աստվածածին եկեղեցու բակում, քիվը ջարդած, խորանի կողերին, 8 տող.



ԵՂԲԱՒՐ
ԱՒՔՍ ԻՄ Կ
ԱՆԿ|Ն|ԵՑԻ
ՄԲ ՆՇԱ[Ն]
Ս Ի ԲԱՐ|Է|
ԽԱՒՍՈՒԹ|ԻՒՆ|
ԾՆՈՂԱՑ Մ
ԵՐՈՑ: |ԹՎԻՆ| ՉԻԸ (1279):

Ծանոթ. 1828 թ. երկրաշարժից հետո եկեղեցու շրջապատից հավաքված 7 խաչքարերը դասավորվել են հարավից աղոթարան տանող ոտնուղու եզրին, կամարամուտից ներս: *Կանկնեցի* եզակի դեմքի փոխարեն տվյալ դեպքում սպասելի էր *եղբաւրաւքս իմ կանկնեցաք,* որպիսի շեղումը նկատվում է այլ վիմագրերում ևս: Թվի միավորը ջարդված է, բայց մնում են Ը գրի ձախ ստեղն ու ելունների հետքերը:

Ի դեպ, Երևանի սեյսմիկ կենտրոնի մասնագետների ասելով, հիշյալ երկրաշարժը տեղի է ունեցել 1827 թ., որը մեծ ավերածություններ է արել հատկապես Արագածոտն-Նիգ-Վարաժնունիք-Նազազ գավառներում:

Թվականի միավորը որոշակիորեն Ա-է (Խմբ.):

978. ԽԱՉՔԱՐ. Նախորդին կից, քիվին և մակերեսին, 4 տող.



ՈՒԲ ԽԱՉՍ ԲԱՐԵ[ԽԱՒՍ Է] . . . Տ[Է]Ր Թ[ՈՐՈՍԻՆ]:
ՄԱՐԻԱՄ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱԾԻՆ:
ՁԱՒԷՏՈՒՄ Յ[ԻՍՈՒՍ]Ի:
[Կ]ԱՁ[ՄՈ]Ղ ԽԱՉ[Ա]ՅՏՈ[Ւ Է]Ր:

Ծանոթ. Խաչատուրը հյուսիսային Հայաստանի նշանավոր խաչքարագործ արվեստագետներից է: Նրա կերտած խաչքարերից այժմ էլ կան Մշկավանքում, Դովեղում, Նոր Վարագավանքում և այլուր: Կարևորը, սակայն, վարպետի նախասիրությունն է, ավետման ավետարանական տեսիլների վերարտադրությունը, որը հայկական միջնադարյան քանդակարվեստի միակ դեպքն է:

Արձանագրությունը խիստ հողմահարված է, գրահետքերն աղոտված, բայց պատկերագրությունը գրեթե անաղարտ է:

Վարպետը գործել է ԺԵ դարի կեսերին:

Չնայած անհաջող լուսանկարին, քիվի վերծանության մեջ բազմակետով նշված հատվածում որոշակի կարդացվում են Զ, Վ, Ը կամ Լ, Ռ, Բ տառերը: Ռ-ից հետո երկու (իրար գլխի) կետեր են, նույնը ՏՐ-ից հետո: Թվում է, թե կարելի է ՈԲ թվականը վերծանել (1501), սակայն և տեղադրությունը և թե Խաչատուրի ապրած ժամանակաշրջանը՝ XVII դարի կեսեր, անհնար են դարձնում այդօրինակ վերծանությունը (Խմբ.):

979. ՏԱՊԱՆԱՔԱՐ. Ս. Աստվածածին եկեղեցու բակում, հարավային թևում, խաչքարերի շարքում, օրորոցաձև, նեղ ճակատին, 8 տող.

Ա ՄԷ Ա[Յ]Ս Է
ՏԱՊԱՆ ՏԱՊԱՆ
ԱՐԶՐՈՒ ԱՐԶՐՈՒ
ՄՑԻՄՀՄ ՄՑԻ Մ[Ա]ՀՏ[Ե]Ս
ԻՏՐ ԿԱՐԱՊ Ի ՏՐ ԿԱՐԱՊԵ
Տ ՏՐՊԵՏՐՈ Տ ՏՐ ՊԵՏՐՈ
ՍՈ ԱՕՎՃԱՐ ՍԻ: ԱՕ ՎՃԱՐ
ՌՄ ՄԻՆ ԵՑ ՌՄ (1751) ԱՄԻՆ:

Ծանոթ. Ըստ լուսանկարի 7-րդ տողի սկզբում Ս տառից հետո կարդացվում է Ռ, իսկ վերջին տողի սկզբում ԵՑ չի երևում (Խմբ.):

980. Ժայռին քանդակված արձանի կողքին, 16 տող.

ԱԽ, ԴՈՒՔ ՀԱՅՐԵՆԻ
ԱՀԱՎՈՐ ԺԱՅՌԵՐ,
ՈՐՔԱՆ ԵՄ ՔԱՅԼԵԼ
ՁԵՐ ԼԱՆՋԵՐՆ Ի ՎԵՐ,
ՁԵՐ ԿՐԾՔԻՆ ՔԱՐԵ
ՎԱՐԴԵՐ ԵՄ ԲԱՑԵԼ,

ԿԱՐԿԱՉ ԱՂԲՅՈՒՐԻՑ
ՍՈՒՆԱԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ,
ԻՍԿ ՊՈՒՔ ՓՈԽԱՐԵՆ՝
ԳԱՀԱՎԻԺԵՑԻՔ,
ԱԽ, ԻԳԻԹ ՈՐՊՈՒՍ
ԿՅԱՆՔԻՑ ՋՐԿԵՑԻՔ:
ԵՎ ՄՈՒՐԾԸ ԶՆԳԱՑ
ՎԱՐՊԵՏ ՄԵՀՐԱԲԻ՝
ՈՐՊԵՍ ԽՈՐ ՎՇՏԻ,
ՈՐՊԵՍ ԲՈՂՈՔԻ:
Միրզախանյան Կառլոս
Մեհրաբի, 1938-1972:

Ծանոթ. Գուգարաց աշխարհի աղբյուրների հռչակավոր վարպետ Մեհրաբի որդի Կառլոսը գոհվել է լեռ մագլցելիս: Հայրը նրա հասակով մեկ արծանը քանդակել է Վանածորից Ալավերդի տանող ճանապարհի եզրի ժայռի վրա, քաղաքային գերեզմանոցի եզրին և իր կսկծալի մտորումները փորագրել արծանի մոտ:

ԴԵԲԵԴ

Գյուղի տարածքը հարուստ է հին և միջնադարյան հուշարձաններով, որոնց ստեղծողները բնօրրանը լքել են XVII դ. կեսերին: Վերաբնակեցվել է XIX դ. 80-ական թվականներին:

Գյուղի իշխող դիրքում գտնվող X-XVII դդ. գերեզմանոցի խաչքարերից երկուսն ունեն հակիրճ հիշատակագրություններ:

981. ԽԱՉՔԱՐ. գերեզմանոցում, թևերի վրա և ներքին եզրում, 4 տող.



[ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱՍԻ Է]
ԾՆՈՂԱՑ ԻՄ
ՈՑ:
ԹՎ[ԻՆ] ՌՃԵ (1656):

Ծանոթ. Խաչքարի վերին մասը ջարդված է, և արձանագրության սկիզբը լրացվում է հավանականորեն: Թվատառի միավորը մաշված է:

982. ԽԱՉՔԱՐ. Նույն գերեզմանոցում, քիվին, 1 տող.



ՍԲ Խ[Ա]ՉՍ ԲԱՐԵԽԱՍ ԱԲԱՍԱ: ԹՎ[ԻՆ] ՌՃ (1651):

Ծանոթ. Անունը դժվար է կարդացվում, քարի այդ մասը միտումնավոր ծեծված է: